Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍԻ 9-Ի ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և շնորհավորում ենք ձեզ Հաղթանակի և խաղաղության օրվա առիթով և բերում ենք բոլորիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Հաղթանակը ֆաշիզմի դեմ, որը ձեռք բերվեց բազմաթիվ ժողովուրդների մեծ զոհողություններով, բռնությունն ու պատերազմը մերժելու և խաղաղությունն ընտրելու մարդկության կամքի վկայությունն է: Մեր հայրերը նույնպես հերոսական մասնակցություն են բերել ֆաշիզմի դեմ պատերազմը հաղթանակով ավարտելու պայքարին՝ ի սեր ազատ ու խաղաղ կյանքի, որը պատմության մեջ մշտական ձգտումն է եղել մեր ժողովրդի: Ազատության մեր սիրով ու խաղաղ գալիքի հավատով կերտեցինք նաև հայոց նորօրյա կյանքի մեծ հաղթանակը՝ Արցախի ազատագրությունը, և Մայիսի 9-ի տոնական ուրախությունն այսուհետ կրկնակի է մեզ համար:

Հաղթանակի ու խաղաղության պանծալի տոնի առիթով Մեր մասնավոր շնորհավորանքներն ու գնահատանքն ենք բերում հայրենյաց պաշտպան քաջարի զավակներին մեր ժողովրդի՝ Երկրորդ աշխարհամարտի վետերաններին և Արցախյան ազատամարտի մասնակիցներին: Աղոթք ենք բարձրացնում բոլոր նրանց համար, ովքեր չվերադարձան ռազմի դաշտից, և բոլոր նրանց, ովքեր այլևս մեզ հետ չեն: Մեզ հետ է, սակայն, նրանց գործը՝ մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ազատությունն ու խաղաղությունը, մեզ հետ է արդար պայքարի հաղթանակի հանդեպ նրանց հավատը:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ աշխարհի ժողովուրդները, տոնի խորհրդով անդրադառնալով շուրջ կես դար առաջ տեղի ունեցած Երկրորդ աշխարհամարտի իրադարձություններին, նորոգեն իրենց հոգում պատրաստակամությունը՝ միացյալ ջանքերով հաստատելու ու պահպանելու խաղաղությունը աշխարհի բոլոր անկյուններում: Թող Ամենախնամ Տերը ազատ ու խաղաղ պահպանի նաև մեր Հայրենիքը և օրհնի իր նոր կյանքը կերտող մեր ժողովրդի ջանքերը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն:

Ս. Էջմիածին,
9 մայիսի 2003 թ.